Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի
2025թ. հունվարի 23-ի թիվ 66-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքը հայտարարում է մրցույթ **«Կապանի «Ծավ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի** թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ *ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, գյուղ Ծավ*

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 187440 (մեկ հարյուր ութսունյոթ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ է:

Թափուր պաշտոնի գործառույթներն են՝

իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումն ու ղեկավարումը՝ այդ թվում՝ կազմակերպում է յուրաքանչյուր սանի կրթությունը նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

3)պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Աշխատանքային օրենսդրության, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Նախադպրոցական կրթության մասին», ՀՀ օրենքների և այլն):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու

ունակություն.
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա 2025 թվականի ապրիլի 23-ին ժամը 10:00-ին, Կապանի համայնքապետարանում (ք. Կապան, Չարենցի 1 հասցեում):

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Կապանի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝
ա) դիմում
2) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին
3) ինքնակենսագրություն.
4) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի դեպքում հավաստագրի՝ բնօրինակները և պատճենները.
5) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
6)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
7) մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի.
Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2025 թվականի ապրիլի 8-ը մինչև ժամը 18:00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են ծանոթանալ **azdarar.am** և **kapan.am** կայքերից, ինչպես նաև կարող են դիմել Կապանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Կապան, Չարենցի 1, հեռ. 060720072, 060720074/ :

Կապան համայնքի ղեկավար ***Գևորգ Փարսյան***